## Աղասի Այվազյան

*Արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, սցենարիստ, ՀԳՄ անդամ: Արժանացել է ՀՍՍՀ և ՀՀ պետական մրցանակների, <<Մեսրոպ Մաշտոց>> շքանշանի, Գրական ազգային մրցանակի:*



Ծնվել է 1925թ. մարտի 23-ին Վրաստանի Աբասթուման ավանում: Սովորել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում, Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, այնուհետև Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Տարբեր հիմնարկություններում աշխատել է որպես նկարիչ-մուլտիպլիկատոր, գծագրող, կոնստրուկտոր, լրագրող գրական և կինո մամուլում: 1965-73թթ. եղել է «Գրական թերթի» արձակի բաժնի վարիչը, 1973-81թթ.՝ «Էկրան» ամսագրի գլխավոր խմբագիրը:

1967թ. «Հայֆիլմ» կինոստուդիան նրա սցենարով նկարահանել է «Եռանկյունին» կինոնկարը, որը երկրորդ մրցանակ է շահել 1968-ի լենինգրադյան համամիութենական փառատոնում:

1990-ականների սկզբին խմբագրել է «Հայություն» շաբաթաթերթը:

Նրա սցենարներով «Հայֆիլմում» և մոսկովյան կինոստուդիաներում նկարահանվել են 15-ից ավելի գեղարվեստական կինոնկարներ, իսկ ինքը որպես բեմադրող-ռեժիսոր նկարահանել է 4 ֆիլմ:

Ա. Այվազյանի սցենարով «Հայֆիլմը» նկարել է «Հայրիկ» գեղարվեստական կինոնկարը, իսկ 1982թ. «Կովկասյան էսպերանտո» պատմվածքի հիման վրա՝ «Լիրիկական երթ» գեղարվեստական կինոնկարը, որի ռեժիսորը եղել է ինքը՝ սցենարի հեղինակը:

Ա. Այվազյանը նաև «Վանոն և գորոդովոյը» պատմվածքի հիման վրա գրված «Վառած լապտեր» կինոնկարի սցենարիստն ու ռեժիսորն է:

Նրա ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, բուլղարերեն, չեխերեն, անգլերեն և այլ լեզուներով. ռուսերեն՝ «Ընտանիքի հայրը» (Մոսկվա, 1975), «Փառահամար» (Երևան, 1976), «Սինյոր Մարտիրոսի արկածները» (Երևան, 1981), «Թիֆլիսի ցուցանակները» (Երևան, 1981), «Եռանկյունին» (Մոսկվա, 1983), «Աղի կոմսը» (Երևան, 1985), «Մեր տխրությունը Կեժոյի շուրջ» (Երևան, 1986),

լիտվերեն՝ «Վիպակների ժողովածու» (Վիլնյուս, 1979), բուլղարերեն՝ «Սինյոր Մարտիրոսի արկածները» (Վառնա, 1981):

Մահացել է 2007թ.: